

ԻՆՉՊԵՍ ԴԱՌՆԱԼ ԱՍՏՂԱԳԵՏ

Ողջո՛ւյն, սիրելի ընթերցող,

Ուրախ եմք, որ քեզ հետաքրքրել է մեր հարցազրույց-խորհուրդների շարքը, որը նվիրված է ՀՀ ազգային արժեք հանդիսացող Բյուրականի աստղադիտարանի 75-ամյակին:

Առաջին զրուցակիցը կամ խորհրդատուն Բյուրականի աստղադիտարանի կրտսեր գիտաշխատող **Հասմիկ Անդրեասյանն** է, ով 5 խորհուրդներով կօգնի հասկանալ, թե «Ինչպես դառնալ աստղագետ»:

23.04.2021

1. Խորացրո՛ւ գիտելիքներդ ֆիզիկայում և մաթեմատիկայում

Այո՛, առանց այս առարկաների իմացության հնարավոր չէ զբաղվել աստղագիտությամբ: Քանի որ այս առարկաները պետք է հանձնել Երևանի պետական համալսարանի Ֆիզիկայի ֆակուլտետն ընդունվելու համար, որից հետո միայն հնարավոր է ընտրել աստղագիտության ուղղությունը: Ընդհանրապես ֆիզիկայի և մաթեմատիկայի իմացությունը շատ հետաքրքիր մտածողություն է զարգացնում յուրաքանչյուրի մոտ՝ անկախ մասնագիտությունից: Հնարավոր է ապրել կյանքը՝ չստալով ոչ մի հարց և չհետաքրքրվելով շրջապատող երևույթներով, բայց մի ուրիշ (բազմազուն) կյանք է, երբ սկսում ես նայել շուրջդ և բարձրաձայնում հարցեր: Իսկ երբ ստանում ես հարցերիդ պատասխանները...զգում ես քեզ ամենակարող: Ի դեպ դա անդրադառնում է ամբողջ կյանքի վրա «կա հարց, կա պատասխան» անալոգիայով՝ **«կա խնդիր, կա լուծում»:**

2. Սովորի՛ր անգլերեն

Ժամանակակից աշխարհում առանց անգլերենի իմացության դժվար է, իսկ աստղագիտության մեջ որտեղ գրականության մեծ մասը և բոլոր հոդվածները անգլերենով են՝ պարզապես անհնար: Առհասարակ «Որքան լեզու գիտես, այնքան մարդ

ես» մեջբերումը այս ժամանակաշրջանում առավել քան ճիշտ է: Աստղագետի կյանքի անբաժան մասն են կազմում միջազգային դպրոցներն ու կոնֆերանսները, որտեղ կարելի է հանդիպել մարդկանց աշխարհի ամեն ծայրից: Պետք է կարողանալ շփվել, ծանոթանալ և ներկայացնել սեփական աշխատանքը, իսկ բոլորի համար ընդունելի ընդհանուր լեզուն անգլերենն է:

3. Եղի՛ր անկեղծ ինքդ քեզ հետ

Սա, իհարկե, լավ է հիշել կյանքի բոլոր բնագավառներում, բայց մասնագիտության և ուսման մեջ նույնպես շատ կարևոր է: Եթե սովորում ես դպրոցում կամ համալսարանում, ապա հիշիր, որ քո ուսումը միայն քեզ է հարկավոր, այլ ոչ թե քո ծնողներին կամ դասախոսներին: Միայն քեզ: Քննություններին նայիր ոչ թե բարձր գնահատական ստանալու, այլ սեփական գիտելիքներն ամրապնդելու տեսանկյունից: Մի կորցրու ժամանակդ, և ցանկացած զբաղվածության ժամանակ նվիրվիր այդ գործին ամբողջությամբ: Ուսում ես ստանում, սովորիր, լիցքաթափվելու ժամանակ լիարժեք հանգստացիր:

4. Պատրա՛ստ եղիր նրան, որ քո ուղեղը միշտ ակտիվ աշխատելու է

Սա այն միտքն է, որը ասել է ինձ իմ հայրը, երբ ես էի ընտրում աստղագիտությունը՝ որպես իմ մասնագիտություն: Այդ ժամանակ ես դա լավ չպատկերացրեցի և միայն այժմ եմ հասկանում, թե ինչ է նկատի ուներ:

Երբ զբաղվում ես գիտական աշխատանքով և ունես քո առջև դրած խնդիր, օրվա ցանկացած ժամի, այդ թվում նաև քնած ժամանակ դու փորձելու ես լուծել այդ խնդիրը:

Բոլոր մտքերդ ուղղված են լինելու դեպի այդ խնդիրը: Հեշտ չէ, բայց ժամանակի ընթացքում դառնում է սովորական:

5. Մի՛ համեմատվիր ոչ մեկի հետ

Միշտ կլինեն գործընկերներ, ովքեր կարող են քեզանից ավելի քիչ կամ շատ հաջողություններ ունենալ: Բայց քո աշխատանքի ծավալը և որակը չպետք է պայմանավորված լինի շրջապատող մարդկանցով: Կարևոր է կատարել սեփական աշխատանքը մեծ սիրով, նվիրումով, բարեսրտորեն և աշխատասիրությամբ: Այդ դեպքում անպայման գիտական աշխատանքը կստացվի բարձր որակի և դու կլինես հաջողակ:

Վերջում չմոռանամ ավելացնել, որ գոյություն ունի 10000 ժամի «չգրված» օրենքը՝ որևէ բնագավառում լավ մասնագետ դառնալու համար անհրաժեշտ է դրան նվիրել 10000 ժամ: Այսպիսով, եթե ցանկանում եք դառնալ աստղագետ, ապա ԲԱՐԻ ԳԱԼՈՒՍՏ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐԻ ԱՇԽԱՐՀ:

Հարցազրույցը պատրաստեց Մելինե Ասրյանը